



ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

2017
հունվար-հունիս

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ.....	3
2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ.....	5
3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	6
3.1 ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ.....	9
4. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10
4.1 ԱՌԵՎՏՈՒՐ.....	11
4.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	12
5. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	13
6. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ.....	17
7. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ.....	18
8. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆԴԵՔՍ.....	20

1. ՀԱՄԱԽԱՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ

ՀՆԱ արտադրությունը


2017 թվականի առաջին եռամսյակում արձանագրվել է վերջին 3 տարիների առաջին եռամսյակի ՀՆԱ ամենաբարձր ցուցանիշը: Եթե 2014-2016 թվականների առաջին եռամսյակներում ՀՆԱ աճին արդյունաբերության հիմնական ճյուղերից առավելագույն նպաստում ուներ հանքագործական արդյունաբերությունը, ապա 2017 թվականի առաջին եռամսյակում առավելագույն նպաստում ապահովել է մշակող արդյունաբերությունը՝ հավակնելով կիսամյակային և տարեկան կտրվածքով ևս դառնալ ՀՆԱ աճ ապահովող հիմնական ճյուղ: Շարունակվում է պահպանվել ՀՆԱ մեջ առևտրի մասնաբաժնի վերջին տարիներին ցուցաբերած դանդաղ նվազման միտումը:

2017 թվականի առաջին եռամսյակում ՀՆԱ կազմել է 971.9 մլրդ դրամ, աճը՝ 6.5%: Արդյունաբերության ավելացված արժեքի աճը կազմել է 12.4% (նպաստումը՝ 2.8 տոկոսային կետ), առևտուր և ծառայություններինը՝ 5.3% (նպաստումը՝ 3.3 տոկոսային կետ), զուտ հարկերինը՝ 10.8% (նպաստումը՝ 1.3 տոկոսային կետ): Գյուղատնտեսության ավելացված արժեքը նվազել է 3.8%-ով (նպաստումը՝ -0.2 տոկոսային կետ), իսկ շինարարությանը՝ 9.6%-ով (նպաստումը՝ -0.5 տոկոսային կետ):

Համախառն ներքին արդյունքի ծավալ և աճ




Համախառն ներքին արդյունքի կառուցվածք, %




Արդյունաբերության ոլորտում արձանագրված նախորդ 3 տարիների եռամսյակային ցուցանիշների դիտարկումները ցույց են տալիս, որ 2014 թվականի 0.9% անկումից հետո ցուցանիշը դինամիկ աճում է: Ընդ որում, աճն առավելապես պայմանավորված է մշակող արդյունաբերության վերականգնման տեմպերով: 2017 թվականի առաջին եռամսյակում մշակող արդյունաբերության ավելացված արժեքի աճն արդեն հասավ 15.4%-ի, ինչն արդյունաբերության աճի համար առավել կայուն հիմքեր է ապահովում, քանի որ հանքագործական արդյունաբերության համեմատությամբ այն նվազ կախվածություն ունի միջազգային գների տատանումներից:

Արդյունաբերության, առևտրի և ծառայությունների ավելացված արժեքների աճ, %




Հանքագործական և մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում և ավելացված արժեքների աճերը, %



Առևտրի ավելացված արժեքի աճը կազմել է 5.3%, ինչը սակայն չի ապահովել ՀՆԱ մեջ առևտրի մասնաբաժնի ավելացում: Առևտրի աճը մասամբ պայմանավորված է առաջին եռամսյակում արտերկրից ստացված տրանսֆերտների ծավալների 39.8% աճով, Ռուսաստանից ստացված տրանսֆերտների գծով գրանցվել է 96.2% աճ: Հունվար-հունիսին ընդհանուր տրանսֆերտների աճը կազմել է 11.1%:

Ծառայությունների ոլորտում ևս 2017 թվականի առաջին եռամսյակում 5.9% աճի պայմանում ՀՆԱ կառուցվածքում գրանցվել է մասնաբաժնի նվազում: Ծառայությունների ավելացված արժեքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ֆինանսական և ապահովագրական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործունեություն, մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայության տեսակներում գրանցվել է համապատասխանաբար՝ 18.3%; 2.0% և 8.8% աճ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի -3.0% նվազման դիմաց 36.6% աճ է գրանցվել նաև կացություն և հանրային սննդի կազմակերպում ծառայության տեսակում: Ավելացված արժեքի նվազում է գրանցվել հետևյալ ծառայությունների տեսակներում՝ պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովագրություն՝ -2.5%, կրթություն՝ -0.7, վարչարարական և օժանդակ գործունեություն՝ -9.2%:

Կառուցվածքային վերլուծության տեսանկյունից չեն դիտարկվել շինարարության և գյուղատնտեսության ոլորտները, քանի որ առաջին եռամսյակը բնութագրական չէ դրանց միտումները բացահայտելու առումով:



ՀՆԱ օգրագործումը

2017 թվականի առաջին եռամսյակում աճ է գրանցել ՀՆԱ հիմնական ծախսային բոլոր բաղադրիչների գծով: Վերջնական սպառման ծախսերը չեն գերազանցում ՀՆԱ մակարդակը: Արտահանման խրախուսման քաղաքականությունը տալիս է իր դրական արդյունքները:

2017 թվականի առաջին եռամսյակում վերջնական սպառման ծախսերի աճին նպաստել են տնային տնտեսությունների 6.0%, տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների 19.7%, կոլեկտիվ պահանջմունքները բավարարող պետական հիմնարկների ծախսերի 3.0% աճը: Բնակչության անհատական պահանջմունքները բավարարող պետական հիմնարկների ծախսերը նվազել են 0.3%-ով:

	2016 Q1		2017 Q1	
	մլրդ դրամ	աճ, %	մլրդ դրամ	աճ, %
ՀՆԱ	901.3	4.7	971.9	6.5
Վերջնական սպառման ծախսեր	920.5	-2.2	968.8	5.4
Համախառն կուտակում	106.7	-6.7	114.2	8.4
Արտահանման և ներմուծման սալդո	-91.7	x	-89.4	x
արտահանում	349.0	26.8	415.7	18.2
ներմուծում	440.7	-2.0	505.1	17.5
Վիճ. շեղում	-34.3	x	-21.8	x




ՀՆԱ կառուցվածքում նվազել է վերջնական սպառման ծախսերի մասնաբաժինը 2.4 տոկոսային կետով: Արտահանման և ներմուծման բացասական սալդոյի մասնաբաժինը նվազել է 1.0 տոկոսային կետով, իսկ համախառն կուտակման մասնաբաժինը, չնայած ծավալային 8.4% աճին, մնացել է անփոփոխ: ՀՆԱ ծախսային բաղադրիչների կառուցվածքում տեղի ունեցած փոփոխություններից ուշագրավ է այն, որ, եթե նախորդ տարիներին վերջնական սպառման ծախսերը գերազանցում էին ՀՆԱ մակարդակը, ապա 2017 թվականի առաջին եռամսյակի վերջնական սպառման ծախսերը կազմում են ՀՆԱ 99.7%-ը: Ինչ վերաբերում է զուտ արտահանման հատվածին, ապա արտահանման աճը պայմանավորված էր հայրենական արտադրանքի նկատմամբ արտաքին պահանջարկի վերականգնմամբ և արտահանման խրախուսմանն ուղղված քաղաքականության իրականացմամբ:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ

Նախորդ երկու տարիների 1-ին եռամսյակների համեմատությամբ բարձրացել է տնտեսական ակտիվության մակարդակը: Արդյունաբերության և ծառայությունների ոլորտները 2017 թվականի առաջին կիսամյակում նախորդ երկու տարիների համապատասխան ցուցանիշների նկատմամբ ավելի բարձր տեմպով են աճել: Առաջին անգամ գրանցվել է գյուղատնտեսական արտադրանքի ծավալի նվազում, իսկ շինարարության նվազման միտումը շարունակվում է:



SUS-ը 2017 թվականի 1-ին եռամսյակում կազմել է 6.1%՝ 2016թ. 5.3% և 2015թ. 4.1%-ի դիմաց: Ընդհանուր առմամբ, 2017 թվականի տնտեսական ակտիվության ցուցանիշի աճի տեմպերը ամսական աճողական դինամիկայում առաջանցիկ են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշների նկատմամբ, բացառությամբ՝ հունվար-ապրիլ ժամանակաշրջանի:



Ի տարբերություն 2015թ. 1-ին կիսամյակում -4.6% նվազման և 2016թ. 1-ին կիսամյակում ընդամենը 0.2% աճի՝ առևտրի շրջանառության աճը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 12.6%: Նախորդ երկու տարիների համեմատությամբ 2017 թվականի առաջին կիսամյակում առաջին անգամ արձանագրվել է գյուղատնտեսական արտադրանքի ծավալի նվազում 1.4%-ով, իսկ շինարարությունը նվազել է 10.0%-ով:

3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2015 և 2016 թվականների համեմատությամբ արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը ամսական աճողական կտրվածքով էականորեն արագացել է: Ընդ որում, 2017 թվականի բոլոր ամիսներին գրանցվել են աճի երկնիչ մեծություններ: Մշակող արդյունաբերությունը արագ և բարձր աճի շնորհիվ վերականգնել է արդյունաբերության աճին առավելագույն նպաստում ունենալու՝ նախորդ տարիների վարքագիծը: Արդյունաբերական արտադրանքի արտահանում/իրացում հարաբերակցությունն աճել է իրացման նկատմամբ արտահանման անվանական ծավալների ավելի արագ աճի արդյունքում: Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճին զուգընթաց, ավելացել են նաև ոլորտում ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը, այդ թվում արտարժույթով:

2017 թվականի առաջին կիսամյակում արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 760.4 մլրդ դրամ, աճը՝ 12.4%:



Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի 2017թ. առաջին եռամսյակի աճը կազմել է 16.2%, երկրորդ եռամսյակինը՝ 9.1%:



Արդյունաբերության 2017թ. հունվար-հունիս ժամանակահատվածի 12.4% աճին առավելապես նպաստել է մշակող արդյունաբերությունը: Եթե 2015 թվականի արդյունաբերության 5.1% աճին նպաստել են հանքարդյունաբերություն 5.7 տոկոսային կետով, իսկ մշակող արդյունաբերությունը զսպել էր -1.3 տոկոսային կետով, 2016 թվականի 8.9% աճին հանքարդյունաբերությունը 3.4 տոկոսային կետով և մշակող արդյունաբերությունը՝ 3.1 տոկոսային կետով, ապա 2017 թվականի նույն ժամանակաշրջանում պատկերը հակառակն է: Արդյունաբերության 12.4% աճին մշակող արդյունաբերությունը նպաստել է 10.5 տոկոսային կետով, իսկ հանքարդյունաբերությունը 1.6% տոկոսային կետով: 2017թ. հունվար-հունիսին արձանագրվել է վերջին տարիներին մշակող արդյունաբերության ճյուղում կիսամյակային ամենաբարձր աճը՝ 17.5%:

Արդյունաբերության հիմնական բաժինների ցուցանիշները


	2015թ. Հունվար - Հունիս			2016թ. Հունվար - Հունիս			2017թ. Հունվար - Հունիս		
	Աճ, %	Կառուցվածք, %	Աճին նպաստում, տ/կ	Աճ, %	Կառուցվածք, %	Աճին նպաստում, տ/կ	Աճ, %	Կառուցվածք, %	Աճին նպաստում, տ/կ
Արդյունաբերություն	5.1	100.0	-	8.9	100.0	-	12.4	100.0	-
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	34.8	18.4	5.7	18.8	18.5	3.4	8.9	20.5	1.6
Մշակող արդյունաբերություն	-2.1	61.1	-1.3	5.1	59.8	3.1	17.5	60.9	10.5
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	3.5	18.9	0.6	11.4	20.1	2.2	0.5	17.1	0.1
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	9.6	1.6	0.1	8.2	1.6	0.1	9.0	1.6	0.1

Արտահանման ցուցանիշի անվանական ծավալների աճը 2015-2017 թվականների հունվար-հունիս ժամանակաշրջանում առաջանցիկ է իրացման աճի նկատմամբ, արդյունքում 2015թ. նույն ժամանակաշրջանի համեմատ 2017թ. արտահանում/իրացում ցուցանիշն ավելացել է 5.1 տոկոսային կետով: Նշվածը բնութագրական է նաև մշակող արդյունաբերության ճյուղի համար:


Հանքարդյունաբերության ճյուղում արտահանում/իրացում հարաբերակցությունը կրճատվել է արտահանման աճի նկատմամբ իրացման առաջանցիկ աճի արդյունքում: 2017 թվականին իրացման ցուցանիշի անվանական աճը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 29.0%, արտահանման՝ 0.1% նվազման պարագայում:

2017 թվականի հունիսի վերջի դրությամբ ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն արդյունաբերության ոլորտում կազմել են 452.6 մլրդ ՀՀ դրամ, որից՝ 384.3 մլրդ ՀՀ դրամին համարժեք արտարժույթով տրամադրված վարկերն են, իսկ 68.3 մլրդ ՀՀ դրամ հայկական արժույթով տրամադրվածները: Ընդ որում, նախորդ տարիների համեմատ էականորեն ավելացել է ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված արտարժույթով վարկերի ծավալը:

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից արտարժույթով տրամադրված վարկերը հունվար-հունիսին հիմնականում ուղղվել են էլեկտրականության, գազի գոլորշու և լավորակ օդի մատակարարման և մշակող արդյունաբերության ոլորտներին:



Վերջին երեք տարիների ընթացքում առաջին անգամ արդյունաբերության մեջ արտաբերված տրամադրված վարկերի ծավալով գերակշռում է էլեկտրականության, գազի գոլորշու և լավորակ օդի մատակարարման ճյուղը:



Արդյունաբերությունում ներդրումային զուտ հոսքերի ծավալը 2017 թվականի առաջին եռամսյակում կազմել են -1884.0 մլն դրամ, որից՝ 12673.9 մլն դրամ ուղղակի ներդրումային զուտ հոսքերն են: Ընդ որում, նախորդ տարվա՝ «հիմնային մետաղների արտադրություն» ճյուղում ներդրումային ընդամենը զուտ հոսքերի բացասական՝ -13221.1 մլն դրամի դիմաց, 2017 թվականի ցուցանիշը դրական է:

Արդյունաբերության ճյուղում կատարված օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալն ըստ գործունեության տեսակների, մլն.դրամ


Գործունեության տեսակը	2015թ. հունվար-մարտ		2016թ. հունվար-մարտ		2017թ. հունվար-մարտ	
	ընդամենը ներդրում	ուղղակի ներդրում	ընդամենը ներդրում	ուղղակի ներդրում	ընդամենը ներդրում	ուղղակի ներդրում
Ընդամենը	34314.9	27422	-3526.8	9162.9	-1884	12673.9
մետաղական հանքաքարի արդյունահանում	12758.7	-	-1932.5	0.0	-4253.7	137.5
հանքագործական արդյուն. և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	-13239.0	-8524.5	-302.0	1283.3	-5944.3	3060.6
հանքարդյունաբերության հարակից գործունեություն	468.4	335.2	417.7	366.4	5784.9	5760.8
աննդամթերքի արտադրություն	429.0	156.6	-1696.9	-1696.9	-157.6	-101.7
խմիչքների արտադրություն	4152.5	3035.2	-2808.0	-2724.8	-3982.3	-3663.7
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	497.8	194.5	4123.4	0.0	3167.9	0.0
հագուստի արտադրություն	190.2	-	-14.1	-14.1	-533.8	-8.9
կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրություն	-	-	0.7	0.7	0.7	0.7
այլ ոչ մետաղական հանքային արտադրատ.արտադրություն	-	-	-97.0	0.0	-145.4	0.0
հիմնային մետաղների արտադրություն	16688.0	16133.6	-13221.1	-1661.7	3645.2	2102.0
համակարգիչների, էլ. և օպտիկ սարքավորանքի արտադրություն	160.6	160.6	-61.2	-61.2	-10.1	-10.1
էլ. սարքավորանքի արտադրություն	118.0	-14.3	-31.4	-11.6	-22.3	-22.3
մեքենաների և սարքավորանքի արտ. չներառված ուրիշ խմբավ	-39.2	-39.2	-58.6	-58.6	-23.1	-23.1
արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	-124.7	-	-62.7	0.0	17.0	0.0
էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	12254.6	15984.3	12216.9	13741.4	572.9	5442.1

3.1 ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մշակող արդյունաբերության աճն արագանում է: Ավելացել է նաև մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալը: 2017 թվականի հունվար-հունիսին աճ է գրանցվել մշակող արդյունաբերության բոլոր ենթաճյուղերում: Շարունակվում է նաև մշակող արդյունաբերությունում առավել ցածր տեսակարար կշիռ ունեցող ենթաճյուղերի աճի միտումը:

Մշակող արդյունաբերության 2017 թվականի հունվար-հունիսի 17.5% աճը էականորեն բարձր է նախորդ տարվա ցուցանիշից (2016թ. նույն ժամանակաշրջանում՝ 5.1%): Արտահանվել է մշակող արդյունաբերության արտադրանքի 47.2%-ը՝ 2016 թվականի նույն ժամանակաշրջանի 43.1%-ի դիմաց (2015թ.՝ 38.9%): Կառուցվածքում շարունակում են գերակշռել 4 ենթաճյուղեր, որոնք կազմել են մշակող արդյունաբերության 77.8%-ը (արդյունաբերության մեջ՝ 47.3%):

Մշակող արդյունաբերության կառուցվածքը, %



Մշակող արդյունաբերության կառուցվածքում ավելացել է «արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում» ճյուղի մասնաբաժինը՝ 5.0% մասնաբաժնով կազմելով 5-րդ խոշոր խումբը: 2017 թվականի առաջին կիսամյակում աճ է արձանագրվել մշակող արդյունաբերության բոլոր ճյուղերում, բացառությամբ՝ «կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրություն», «մեքենաների և սարքավորանքի արտադր. չներառված ուրիշ խմբավորումներում» և «այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրություն» ճյուղերի, որոնք նվազել են համապատասխանաբար՝ 20.1%, 23.6% և 99.7%-ով: Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման անվանական ծավալների զգալի աճի արդյունքում արտահանում/հրացում հարաբերակցությունը ավելացել է 4.1 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերության կառուցվածքում առավել բարձր տեսակարար կշիռ ունեցող ենթաճյուղերի ցուցանիշներ, հունվար-հունիս

	2015թ.			2016թ.			2017թ.		
	Իրացում մլրդ դրամ	Արտահանում մլրդ դրամ	Արտահանում իրացման նկատմամբ %	Իրացում մլրդ դրամ	Արտահանում մլրդ դրամ	Արտահանում իրացման նկատմամբ %	Իրացում մլրդ դրամ	Արտահանում մլրդ դրամ	Արտահանում իրացման նկատմամբ %
Մշակող արդյունաբերություն	384.4	149.5	38.9	396.2	170.9	43.1	454.2	214.3	47.2
Սննդամթերքի արտադրություն	134.9	6.3	4.6	134.3	8.9	6.6	133.5	9.6	7.2
Խմիչքների արտադրություն	41.9	21.4	51.0	48.1	30.0	62.3	63.0	42.3	67.1
Շխախոտային արտադրատես. արտ.	47.0	33.8	71.9	56.9	41.4	72.8	65.5	51.2	78.2
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտ.	20.2	2.1	10.5	14.8	6.5	43.6	16.3	2.3	14.3
Հիմնային մետաղների արտադր.	84.5	73.0	86.3	73.8	59.9	81.1	91.7	76.1	83.0
Արտադրատեսակների արտ., չներառված ուրիշ խմբավ	6.9	6.0	85.9	17.5	16.0	91.0	23.9	22.8	95.5



Պատկերը նույնն է նաև մշակող արդյունաբերության խոշոր 6 ճյուղերում, բացառությամբ՝ «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն» ճյուղի, որտեղ արտահանում/իրացման նկատմամբ հարաբերակցությունը նվազել է 29.3 տոկոսային կետով թողարկման և իրացման աճի պայմաններում (աճել է ներքին շուկայում իրացման ծավալը):

Մշակող արդյունաբերության ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, 2017թ. հունվար-հունիս

	Արտադրանքի ծավալ, մլրդ դրամ	Աճ 2016թ. նույն Ժ/2 նկատմամբ, %	Կառուցվածք, %	Արդյունաբերության աճին նպաստման չափ, %	Արտահանումն իրացման նկատմամբ %
C Մշակող արդյունաբերություն	462.9	17.5	60.9	10.5	454.2
10 Սննդամթերքի արտադրություն	145.5	8.5	19.1	1.7	133.5
11 Խմիչքների արտադրություն	61.6	23.5	8.1	1.8	63.0
12 Ծխախոտային արտադրատեսակների արտադր.	70.7	24.6	9.3	2.2	65.5
13 Մանածագործական արտադր արտադր.	0.3	27.5	0.0	0.0	0.3
14 Հագուստի արտադրություն	5.6	4.7	0.7	0.0	5.9
15 Կաշվի, կաշվե արտադրատես. արտադր.	0.6	-20.1	0.1	0.0	0.7
16 Փայտանյութի մշակում, բացի կահույքից	0.4	1.0	0.1	0.0	0.4
17 Թղթի և թղթե արտադր. արտադրություն	10.9	17.8	1.4	0.3	10.6
18 Պոլիգրաֆ. գործ., գրառված կրիչների բազմացում	6.1	50.2	0.8	0.3	6.0
20 Քիմիական նյութերի և քիմիական արտադրատես. արտադրություն	4.8	17.0	0.6	0.1	4.5
21 Դեղագործական արտադր արտադրություն	4.6	20.4	0.6	0.1	4.0
22 Ռետինե և պլաստմասսայե արտադրատես. արտ.	12.6	14.6	1.7	0.2	13.0
23 Այլ ոչ մետաղական հանքային արտադրատես. արտ.	17.7	17.3	2.3	0.4	16.3
24 Հիմնային մետաղների արտադրություն	82.1	18.7	10.8	1.9	91.7
25 Պատրաստի մետաղական արտադրատես. արտ.	4.6	4.0	0.6	0.0	4.5
26 Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրություն	2.6	13.1	0.3	0.0	3.2
27 Էլեկտրական սարքավորանքի արտադրություն	5.0	101.7	0.7	0.3	2.8
28 Մեքենաների և սարքավորանքի արտադր. չներառված ուրիշ խմբավորումներում	0.9	-23.6	0.1	0.0	1.0
30 Այլ տրանսպորտային սարքավորանքի արտ.	0.0	-99.7	-	-	0.1
31 Կահույքի արտադրություն	1.5	36.8	0.2	0.1	1.5
32 Արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	23.2	32.4	3.1	0.9	23.9
33 Մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում	1.6	106.9	0.2	0.1	1.6

4. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Թե առևտրի և թե ծառայությունների գծով 2017 թվականի առաջին կիսամյակում գրանցվել են նախորդ տարիների ամենաբարձր աճերը:



4.1 ԱՌԵՎՏՈՒՐ

Ի տարբերություն նախորդ տարվա սկզբում արձանագրված բացասական կամ բավականին ցածր ամսական աճերի՝ 2017 թվականին առևտրի շրջանառության ամսական աճերը երկնիշ են (բացառությամբ՝ հունվար ամսվա 9.2% աճի): Վերջին երեք տարիների ընթացքում առևտրի շրջանառության կառուցվածքում աստիճանաբար նվազել է մանրածախ առևտրի մասնաբաժինը և ավելացել է մեծածախ առևտրի մասնաբաժինը:

2017թ. առաջին կիսամյակում առևտրի շրջանառությունը կազմել է 1121.7 մլրդ դրամ՝ աճը 12.6%: 2017 թվականի 1-ին եռամսյակում առևտրի շրջանառության աճը կազմել է 11.3% (2016թ. 1-ին եռամսյակի 0.7% նվազման դիմաց), իսկ 2-րդ եռամսյակում՝ 13.6% (2016թ. 2-րդ եռամսյակի 1.0%-ի դիմաց):




2017 թվականի հունվար-հունիսին առևտրի շրջանառության մեջ ամենամեծ մասնաբաժինն ունեցող մանրածախ առևտրաշրջանառության 2015թ.՝ -6.7% և 2016թ.՝ -2.4% նվազումների դիմաց 6.2% աճ է արձանագրվել: Նույն ժամանակահատվածում մեծածախ առևտրի շրջանառությունն աճել է 20.3%-ով, 2015թ.՝ -2.4% նվազման և 2016թ.՝ 5.0% աճի դիմաց, իսկ ավտոմեքենաների առևտրի շրջանառությունը՝ 21.6%-ով 2015թ.՝ -6.0% նվազման և 2016թ.՝ 9.0% աճի դիմաց:



Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ մանրածախ առևտրաշրջանառության ոլորտում աճել է խանութների, կրպակների և առևտրի այլ օբյեկտների (շարժիչային և կենցաղային վառելիքի մանրածախ վաճառքի կետեր) միջոցով իրականացվող առևտրաշրջանառությունը համապատասխանաբար՝ 8.4%, 2.3% և 9.2%-ով:

Մանրաձախ առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ առևտրի օբյեկտների և առևտրի իրականացման վայրի տեսակների, հունվար-հունիս, %




Մանրաձախ առևտրաշրջանառության մեջ ավելացել է խանութների միջոցով իրականացվող առևտրաշրջանառության մասնաբաժինը և կրճատվել առևտրի այլ օբյեկտների և սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվողներինը:

4.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծառայությունների ծավալի ամսական աճերը հիմնականում երկնիշ են (բացառությամբ՝ փետրվար և մարտ ամիսների) և առաջանցիկ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշների նկատմամբ: Ի տարբերություն նախորդ երկու տարիների 2017թ. հունվար-հունիս ժամանակահատվածում աճ է արձանագրվել ծառայությունների բոլոր տեսակներում:

2017թ. առաջին կիսամյակում ծառայությունների ծավալը կազմել է 648.7 մլրդ դրամ՝ աճը 10.1%: 2017թ. առաջին երեք ամիսներին ծառայությունների ծավալի աճը փոքր-ինչ դանդաղել է նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ՝ կազմելով 10.0% (2016թ.՝ 10.4%-ի դիմաց): Փոխարենը ապրիլ, մայիս, հունիս ամիսների ընթացքում նախորդ տարվա նույն ամիսների համեմատ ծառայությունների ծավալի ամսական աճերն արդեն երկնիշ են: Արդյունքում, երկրորդ եռամսյակի աճը կազմել է 11.6%՝ 2016թ.՝ 6.7%-ի դիմաց:

Ծառայությունների ծավալի աճ, եռամսյակային, %



Ծառայությունների ծավալի աճ, ամիսը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %



Առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ծառայության տեսակներից «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ծառայության ծավալի աճը կազմել է 18.9%, «մշակույթ, զվարճություններ և հանգիստ»՝ 9.4%, «տեղեկատվություն և կապ»՝ 4.6% և «տրանսպորտ»՝ 14.1%:


Ծառայությունների կառուցվածք, հունվար-հունիս, %




5. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ամսական աճողական աճերը երկնիչ են և առավել բարձր տեմպեր ունեն նախորդ տարվա համապատասխան ցուցանիշների համեմատ: 2017 թվականին դեպի ԵՄ երկրներ արտահանման աճի տեմպերի՝ նախորդ տարվա նույն ժ/2 համեմատ արագացմանը զուգահեռ դանդաղել են դեպի ԱՊՀ երկրներ արտահանման աճի տեմպերը: Արտահանման խթանմանն ուղղված քաղաքականության իրականացման արդյունքում նախկինում արտահանման կառուցվածքում փոքր մասնաբաժին ունեցող ճյուղերի արտահանումները ևս սկսել են աճել:



2017 թվականի առաջին կիսամյակում ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 2815.1 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ 24.0%-ով: Արտահանումը կազմել է 993.9 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 21.0%, իսկ ներմուծումը՝ 1821.2 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 25.8%:




2017 թվականի հունվար-հունիս ժամանակաշրջանում աճել է ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը բոլոր երկրների խմբերի գծով. մասնավորապես՝ ԱՊՀ երկրների հետ առևտրաշրջանառության աճը կազմել է 21.7%, ԵՄ երկրների հետ՝ 18.0%, ԱՅԼ երկրների հետ՝ 28.9%:



Աճ է արձանագրվել նաև ԵՏՄ անդամ պետությունների հետ առևտրաշրջանառության գծով. Ռուսաստանի Դաշնության հետ առևտրաշրջանառության աճը կազմել է 23.7%, Բելառուսիինը՝ 37.4%, իսկ Ղազախստանինը՝ 56.4%: ՀՀ արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքում նախորդ տարիների համեմատությամբ ավելացել է «ԱՅԼ երկրներ» և «ԵՏՄ երկրներ» խմբերի մասնաբաժինները և կրճատվել է «ԵՄ երկրներ» խմբի մասնաբաժինը:




2017 թվականի հունվար-հունիսին՝ ինչպես և նախորդ երկու տարիներին, « արտաքին առևտրաշրջանառության գծով հիմնական գործընկեր երկրներ են հանդիսանում. ԱՊՀ երկրներից՝ ՌԴ, Ուկրաինա, Բելառուս, ԵՄ երկրներից՝ Գերմանիա, Բուլղարիա, Իտալիա, ԱՅԼ երկրներից՝ Չինաստան, Այլ երկրներ ենթախումբ, Շվեյցարիա, Վրաստան, Իրան, որոնք միասին կազմում են արտաքին առևտրաշրջանառության 71.6%-ը:




Նախորդ երկու տարիների համեմատությամբ 2017 թվականի դիտարկվող ժամանակահատվածում « արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքում կտրուկ ավելացել է Շվեյցարիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների հետ առևտրաշրջանառության մասնաբաժինը: Նվազել է Չինաստանի, Այլ երկրներ ենթախմբի, Իրանի և ԱՄՆ հետ առևտրաշրջանառության մասնաբաժինը:

2017 թվականի հունվար-հունիսին աճել է արտահանումը բոլոր երկրների խմբերի գծով. ԱՊՀ երկրներ արտահանման աճը կազմել է 24.6%, ԵՄ երկրները՝ 30.9% և Այլ երկրներ՝ 13.6%:



ՀՀ արտահանման կառուցվածքում 2015 թվականի համեմատ ավելացել է դեպի ԱՊՀ երկրներ արտահանման մասնաբաժինը (7.3 տոկոսային կետով), որին զուգահեռ էականորեն՝ 9.1 տոկոսային կետով, ավելացել է դեպի ԵՏՄ երկրներ արտահանման մասնաբաժինը: Կրճատվել է դեպի ԱՅԼ երկրներ արտահանման մասնաբաժինը՝ 8.6 տոկոսային կետով:




ԱՊՀ երկրներ: 2017թ. հունվար-հունիս ժամանակահատվածում դեպի Ռուսաստան արտահանումն աճել է 27.3%-ով, դեպի Ղազախստան՝ 34.0%-ով: Արտահանումը դեպի Բելառուս նվազել է 27.0%-ով:

ԵՄ երկրներ: Այս խմբում հիմնական գործընկերներ հանդիսացող երկրներից արտահանումն աճել է դեպի Բուլղարիա 70.6%-ով, Նիդեռլանդներ՝ 2.1 անգամ, Բելգիա՝ 16.0% և Իտալիա՝ 25.7%: Դեպի այս խմբում երկրորդ հիմնական գործընկեր հանդիսացող Գերմանիա արտահանումը նվազել է 5.8%-ով:

ԱՅԼ երկրներ: 2017թ. հունվար-հունիս ժամանակահատվածում այս խմբում հիմնական գործընկերներ հանդիսացող երկրներից արտահանումն աճել է դեպի Շվեյցարիա 5.3 անգամ, Չինաստան՝ 20.0%-ով, Արաբական Միացյալ Էմիրություններ՝ 3.3 անգամ և Միացյալ Նահանգներ՝ 62.5%-ով: Նվազել է արտահանումը դեպի Վրաստան 5.7%-ով, Իրաք՝ 8.9%-ով, Իրան՝ 9.3%-ով և Այլ երկրներ ենթախումբ՝ 57.5%-ով:

2017 թվականի հունվար-հունիսին արտահանման աճ է արձանագրվել ըստ ապրանքային բաժինների հիմնականում բոլոր խոշոր խմբերում: Մասնավորապես՝ հանքահումքային արտադրանքի արտահանման աճը կազմել է 36.3%, պատրաստի սննդի արտադրանք՝ 32.5% և ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ 26.5%: Ապրանքային խոշոր բաժիններից արտահանումը նվազել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» բաժնի գծով 11.9%-ով:

«Արտահանման կառուցվածքն ըստ ապրանքային բաժինների, հունվար-հունիս, %»




«Մանածագործական իրեր» բաժնի արտահանման աճը կազմել է 16.9% (2017թ. կառուցվածքում մասնաբաժինը 5.2% է 2015թ.՝ 3.1%-ի դիմաց), «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» բաժինն աճել է 2.7անգամ (2017թ. կառուցվածքում մասնաբաժինը 2.2% է 2015թ.՝ 1.1%-ի դիմաց) և «սարքեր և ապարատներ» բաժնի արտահանման աճը կազմել է 40.0% (2017թ. կառուցվածքում մասնաբաժինը 1.9% է 2015թ.՝ 1.8%-ի դիմաց): Ի հակադրություն նշվածի նվազել է «բուսական ծագման արտադրանք» բաժնի արտահանումը 39.3%-ով 2017թ. կառուցվածքում մասնաբաժինը 2.1% է 2015թ. 3.3%-ի դիմաց):

2017 թվականի հունվար-հունիսին ներմուծման աճը կազմել է 25.8%: Աճել է ներմուծումը ԵՄ երկրներից 20.9%-ով և Այլ երկրներից՝ 54.2%: ԱՊՀ երկրներից ներմուծումը նվազել է 6.7%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նվազումների կամ ցածր աճի տեմպերի համեմատ 2017թ. առաջին կիսամյակում ներմուծման աճի տեմպերը բարձր են և արագացել են բոլոր երկրների խմբերի պարագայում (բացառությամբ ԱՊՀ երկրներից ներմուծման):

Ներմուծման կառուցվածքում ավելացել է ԱՅԼ երկրներից ներմուծման մասնաբաժինը, 2015թ. նկատմամբ՝ 1.9 տոկոսային կետով, 2016թ.՝ 9.6 տոկոսային կետով:

«Ներմուծման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, հունվար-հունիս, %»




ԱՊՀ երկրներ: 2017թ. հունվար-հունիս ժամանակահատվածում Ռուսաստանի Դաշնությունից ներմուծումը նվազել է 7.5%-ով, Բելառուսից՝ 1.6%-ով: Ղազախստանից ներմուծումը աճել է 1.5 անգամ: Այս խմբում կառուցվածքում երկրորդ խոշոր մասնաբաժինն ունեցող Ուկրաինայից ներմուծման աճը կազմել է 5.0%:

ԵՄ երկրներ: Այս խմբում հիմնական գործընկերներ հանդիսացող երկրներից ներմուծման աճ է արձանագրվել Միացյալ Թագավորությունից՝ 3.4 անգամ, Ֆրանսիայից՝ 56.0% և Բելգիայից՝ 27.2%: Այս խմբում հիմնական գործընկերներ հանդիսացող Գերմանիայից ներմուծումը նվազել է 25.3%-ով, Իտալիայից՝ 3.4%-ով:

ԱՅԼ երկրներ: Այս խմբում ներմուծումն աճել է բոլոր հիմնական գործընկերներ հանդիսացող երկրների գծով: Մասնավորապես, Այլ երկրներ ենթախմբից ներմուծումն աճել է 2.1 անգամ, Վրաստանից՝ 3.3 անգամ, Արաբական Միացյալ Էմիրություններից՝ 4.8 անգամ, Շվեյցարիայից՝ 4.9 անգամ, Իրանից՝ 6.9%-ով, Թուրքիայից՝ 4.5%-ով և Միացյալ Նահանգներից՝ 6.8%-ով: Չինաստանից ներմուծումը նվազել է 35.5%-ով:

2017թ. հունվար-հունիսին ներմուծման աճ է արձանագրվել ապրանքային բաժինների բոլոր խմբերում:




Ներմուծման աճ է գրանցվել նաև հետևյալ բաժինների գծով՝ «հանքահումքային արտադրանք»՝ 12.9% (2017թ. կառուցվածքում մասնաբաժինը 16.8% է 2016թ.՝ 18.7%-ի և 2015թ.՝ 19.6%-ի դիմաց), «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» բաժինն աճել է 31.1%-ով (2017թ. կառուցվածքում մասնաբաժինը 13.9% է 2015թ.՝ 12.6%-ի դիմաց), «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք»՝ 44.7% (2017թ. կառուցվածքում մասնաբաժինը 12.6% է 2016թ.՝ 11.0%-ի և 2015թ.՝ 9.4%-ի դիմաց), «պատրաստի սննդի արտադրանք»՝ 10.7% (2017թ. կառուցվածքում մասնաբաժինը 9.6% է 2016թ.՝ 10.9%-ի և 2015թ.՝ 9.2%-ի դիմաց), «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր»՝ 23.9% (2017թ. կառուցվածքում մասնաբաժինը 6.8% է 2016թ.՝ 6.9%-ի և 2015թ.՝ 8.6%-ի դիմաց), «մանածագործական իրեր» բաժնի արտահանման աճը կազմել է 21.0% (2017թ. կառուցվածքում մասնաբաժինը 6.1% է 2015թ.՝ 5.2%-ի դիմաց), «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»՝ 58.5% (2017թ. կառուցվածքում մասնաբաժինը 6.0% է 2016թ.՝ 4.8%-ի և 2015թ.՝ 3.0%-ի դիմաց):

6. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Տնտեսության իրական հատվածում 2017թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ օտարերկրյա ներդրումների ներհոսքն աճել է (աճ է գրանցվել նաև ուղղակի ներդրումների ներհոսքի գծով): Օտարերկրյա ներդրումների -7.5 մլրդ դրամ զուտ հոսքերը հիմնականում պայմանավորված են նախորդ եռամսյակներում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դիմաց վճարված գումարներով ու տրված կանխավճարներով: Մասնավորապես, վերջինիս մասին է վկայում «մանրածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից» ոլորտից 13.5 մլրդ դրամի արտահոսքը դեպի Արաբական Միացյալ Էմիրություններ: Օտարերկրյա ներդրումների հիմնական մասնաբաժինը շարունակում է պատկանել ՌԴ-ին:

Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների համախառն ներհոսքը կազմել է 251.0 մլրդ դրամ (որից ուղղակի ներդրումների համախառն ներհոսքը՝ 94.2 մլրդ դրամ է), որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 38.3%-ով (ուղղակի ներհոսքի աճ՝ 36.9%): Հիմնական մասնաբաժինը պատկանում է ՌԴ-ին՝ 43.0% (ուղղակի ներդրումների մասնաբաժինը՝ 78.7%): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՌԴ կողմից կատարված ներդրումների ներհոսքը աճել է 18.4%-ով (ուղղակի ներդրումների աճ՝ 18.2%):

2017 թվականի առաջին եռամսյակում տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել է մոտ -7.5 մլրդ դրամ (բացարձակ փոփոխությունը կազմում է -9.2 մլրդ դրամ), որից ուղղակի ներդրումների զուտ հոսքերը կազմել են 19.7 մլրդ դրամ (բացարձակ փոփոխությունը՝ 4.8 մլրդ դրամ):



Ըստ գործունեության տեսակների՝ ընդամենը ներդրումների զուտ հոսքերը հիմնականում ուղղվել են՝ հեռահաղորդակցություն (7.7 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 2.1 մլրդ դրամ, երկրները՝ Կիպրոս, Լիբանան), հիմնային մետաղների արտադրություն (3.6 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 2.1 մլրդ դրամ, երկրները՝ Միացյալ Թագավորություն, Ռուսաստան, Գերմանիա) հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն (5.8 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 5.8 մլրդ դրամ, երկիրը՝ Ջերսի), ծխախոտային արտադրատեսակների արտադրություն (3.2 մլրդ դրամ, երկիրը՝ Կանադա), ջրի մշակում, հավաքում և բաշխում (2.0 մլրդ դրամ, երկիրը՝ Ֆրանսիա) մանրածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից (-13.5 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 0.5 մլրդ դրամ, երկիրը՝ Արաբական Միացյալ Էմիրություններ), հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր (-5.9 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 3.1 մլրդ դրամ, երկիրը՝ Գերմանիա), մետաղական հանքաքարի արդյունահանում (-4.2 մլրդ դրամ, երկրները՝ Նիդեռլանդներ, Կիպրոս) և այլն:

Ըստ երկրների իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի՝ Կիպրոս՝ 7.5 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումները՝ 3.0 մլրդ դրամ, Ջերսի՝ 5.8 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումները մոտ 5.8 մլրդ դրամ, Կանադա՝ 3.2 մլրդ դրամ ընդամենը ներդրումով, Լիբանան 2.0 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 2.2 մլրդ դրամ, Միացյալ Թագավորություն՝ 1.8 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումները՝ 1.0 մլրդ դրամ, Ֆրանսիա՝ 3.6 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումները՝ 3.4 մլրդ դրամ, Արգենտինա՝ 2.8 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումները՝ 3.5 մլրդ դրամ, ՌԴ՝ 1.6 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումները՝ 4.8 մլրդ դրամ, Արաբական Միացյալ Էմիրություններ՝ -13.5 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ -0.4 մլրդ դրամ, Գերմանիա՝ -6.2 մլրդ դրամ, որից ուղղակի՝ 3.9 մլրդ դրամ, Ֆրանսիա՝ -1.9 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումները՝ -1.8 մլրդ դրամ:

7. ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի 1-ին կիսամյակում նախորդ երկու տարիների նույն ժամանակաշրջանների համեմատ զբոսաշրջության աճի տեմպն արագացել է: 2017 թվականի առաջին եռամսյակում աճել են և՛ արտաքին, և՛ ներքին զբոսաշրջության ցուցանիշները:

Ըստ ԱՎԾ նախնական տվյալների՝ 2017 թվականի առաջին կիսամյակում հանրապետություն է ժամանել 622 հազար 381 զբոսաշրջիկ կամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ցուցանիշն աճել է 24.2%-ով: Զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 570 հազար 400 մարդ կամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 21.2%-ով:

	2015 S1	2016 S1	2017 S1
Ջրոսաշրջիկների թվաքանակ հազար մարդ			
ժամանողներ	256.9	501.1	622.4
Մեկնողներ	250.3	470.7	570.4
Ջրոսաշրջիկների թվաքանակի աճ, %			
ժամանողներ	1.8	2.4	24.2
Մեկնողներ	1.0	1.2	21.2

2017 թվականի առաջին եռամսյակում հանրապետություն է ժամանել 298 հազար 533 զբոսաշրջիկ կամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ցուցանիշն աճել է 18.2%-ով: Զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 266 հազար 324 մարդ կամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 17.1%-ով: Ներքին զբոսաշրջության ցուցանիշն աճել է 20.1%-ով կամ 90 հազար 634 մարդ:

Ըստ ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության ՀՀ այցելած զբոսաշրջիկների 26.1%-ը բաժին է ընկնում ԱՊՀ երկրներին (որից 22.3%-ը բաժին է ընկնում ՌԴ-ին), 14.2%-ը՝ ԵՄ երկրներին (որից 3.7%-ը՝ Ֆրանսիային, 3.1%-ը՝ Գերմանիային, 2.9%-ը՝ Միացյալ Թագավորությանը և այլն) և 59.7%-ը այլ երկրներին (որից 29.5%-ը բաժին է ընկնում Իրանի Իսլամական Հանրապետությանը, 7.1%-ը՝ ԱՄՆ-ին և այլն): ՌԴ-ից ժամանած զբոսաշրջիկների թիվը 2017թ. առաջին եռամսյակում աճել է 12.8%-ով: Շարունակվում է կտրուկ աճել նաև Իրանի Իսլամական Հանրապետությունից ժամանած զբոսաշրջիկների թիվը, աճը կազմել է 72.8%:



	2015 Q1	2016 Q1	2017 Q1
Ջրոսաշրջիկների թվաքանակ հազար մարդ			
ժամանողներ	214.8	252.5	298.5
Մեկնողներ	232.6	227.5	266.3
Ջրոսաշրջիկների թվաքանակի աճ, %			
ժամանողներ	-4.0	8.6	18.1
Մեկնողներ	-4.1	5.9	17.1

Ըստ այցելության նպատակի՝ ժամանողների 60.4%-ը հանրապետություն են ժամանել հանգստի և ժամանցի նպատակով (աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 2 անգամ), 23.1%-ը՝ գործնական (աճը՝ 3.1), 16.1%-ը՝ այլ նպատակներով (նվազումը՝ -23.7%) և 0.4%-ը բուժման նպատակով (աճը՝ 68.6%):

Մեկնողների 57.9%-ը մեկնել է հանրապետությունից հանգստի և ժամանցի նպատակով (նվազումը՝ -32.5%), 38.1%-ը՝ այլ նպատակով (աճը՝ 4.3%) և 4.0%-ը՝ գործնական (աճը՝ 75.4%):

Ներքին զբոսաշրջության կառուցվածքում 70%-ը բաժին է ընկել հանգստի և ժամանցի նպատակով այցելություններին (աճը՝ 29.6%), 23.4%-ը՝ գործնական նպատակով (աճը՝ 22.4%), 3.2%-ը բուժման նպատակով (աճը՝ 8.4%) և 3.4%-ը՝ այլ նպատակով (նվազումը՝ -52.9%):

8. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆԴԵՔՍ


ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԻՆԴԵՔՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանը՝

- 70.3 միավորով զբաղեցնում է 33-րդ տեղը 180 գնահատված երկրների շարքում
- Դիրքը բարելավվել է 21 տեղով, իսկ միավորը աճել է 3.3-ով
- Ընդգրկվել է Առավելապես ազատ երկրների խմբում
- Ընդգրկված է Եվրոպայի խմբում, որը ներառում է 45 երկիր
- Եվրոպայի խմբում զբաղեցնում է 19-րդ տեղը
- ԱՊՀ երկրների շարքում պահպանել է առաջատարի դիրքերը
- Տարածաշրջանի երկրներից զիջում է միայն Վրաստանին

Տնտեսական ազատության ինդեքսը (ՏԱԻ)՝

- Հրապարակվում է Heritage Foundation-ի և “The Wall Street Journal”-ի կողմից
- Ըստ տնտեսական ազատության ինդեքսի երկրները դասակարգվում են 5 խմբի՝ Ազատ (100-80), Առավելապես ազատ (79.9-70), Չափավոր ազատ (69.9-60), Առավելապես անազատ (59.9-50), Ռեպրեսիվ (49.9-0)
- ՏԱԻ ներառում է 4 հենասյուն՝ 12 բաղադրիչներով, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 0-100 սանդղակով
- ՏԱԻ միավորը 12 բաղադրիչների թվաբանական միջինն է
- Ինդեքսում ներառվել է 186 երկիր, որոնցից գնահատվել է 180-ը
- Համաշխարհային միջին միավորը 60.9 է և նախորդ տարվա համեմատ բարելավվել է 0.2 միավորով
- Ազատ երկրները 5-ն են՝ Հոնկ-Կոնգ, Սինգապուր, Նոր Զելանդիա, Շվեյցարիա, Ավստրալիա, որոնց կազմը նախորդ տարվա համեմատ չի փոխվել




ՏԱԻ ԲԱՂԱԴԻԻՉՆԵՐԻ ՄԻՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՀԱՄԵՄԱՏ

	2017	17/16	2016	16/15	2015	15/14	2014	14/13	2013	13/12
ՏԱԻ միավոր	70.3	▲ 3.3	67.0	▼ -0.1	67.1	▼ -1.8	68.9	▼ -0.5	69.4	▲ 0.6
Օրենքի գերակայություն										
Սեփականության իրավունքներ	55.5	▲ 35.5	20.0	— 0.0	20.0	▼ -10.0	30.0	— 0.0	30.0	— 0.0
Դատական արդյունավետություն	42.5	-	-	-	-	-	-	-	-	-
Կառավարության ինտեգրվածություն	43.4	▲ 6.4	37.0	▲ 1.0	36.0	▲ 9.3	26.7	▲ 0.7	26.0	— 0.0
Կառավարության մասնակցության չափ										
Հարկային բեռ	83.7	▼ -0.1	83.8	▼ -0.6	84.4	▼ -2.1	86.5	▼ -1.5	88.0	▼ -1.3
Պետական ծախսեր	81.7	▲ 1.0	80.7	▼ -2.1	82.8	▲ 1.5	81.3	▼ -0.8	82.1	▲ 7.2
Ֆիսկալ առողջություն	82.9	-	-	-	-	-	-	-	-	-
Կարգավորման արդյունավետություն										
Գործարար ազատություն	78.5	▲ 1.0	77.5	▼ -5.2	82.7	▼ -0.4	83.1	▼ -4.5	87.6	▼ -0.2
Աշխատուժի ազատություն	72.4	▲ 10.2	62.2	▼ -2.1	64.3	▼ -14.2	78.5	▲ 1.4	77.1	▲ 0.5
Մոնետար ազատություն	72.8	— 0.0	72.8	▲ 2.2	70.6	▼ -6.4	77.0	▲ 4.0	73.0	▼ -0.1
Բաց շուկաներ										
Առևտրի ազատություն	80.2	▼ -5.4	85.6	▲ 0.2	85.4	▼ -0.1	85.5	▲ 0.1	85.4	— 0.0
Ներդրումային ազատություն	80.0	— 0.0	80.0	▲ 5.0	75.0	▲ 5.0	70.0	▼ -5.0	75.0	— 0.0
Ֆինանսական ազատություն	70.0	— 0.0	70.0	— 0.0	70.0	— 0.0	70.0	— 0.0	70.0	— 0.0

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՆՇՈՒՄ

2017 թվականին ՏԱԻ համալրվել է 2 բաղադրիչներով՝ Կառավարության ինտեգրվածության մակարդակ և ֆիսկալ առողջություն, համարժեքորեն Օրենքի գերակայության և Կառավարության չափի հենայուններում: Եթե համարվում գնահատվող Կոռուպցիայի և Ֆիսկալ ազատությունների բաղադրիչները վերանվանվել են համապատասխանաբար Դատական արդյունավետության և Պետական ծախսերի:


12 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ



ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ (Ներառյալ Ուկրաինա)



ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐ



ԻՆԴԵՔՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ՏԱԻ Հենասյուն / Բաղադրիչ	2017	2016	Փոփոխ.	Գործոններ / Մեկնաբանություններ
Օրենքի գերակայություն				
Սեփականության իրավունքներ	55.5	20.0	35.5	Հայաստանի օրենսդրությունը պաշտպանում է անձնական և անշարժ գույքի երաշխավորված իրավունքները: Առկա են դատական համակարգի անկախության և թափանցիկության խնդիրներ: Բոլոր վեճերը, ներառյալ՝ պայմանագրային, գույքային սեփականության կամ կոմերցիոն հարցերի գծով, լուծվում են ընդհանուր իրավասության դատարաններում, որոնք զբաղվում են և քաղաքացիական, և քրեական գործերով, և առկա են տևական հետաձգումներ: Համատարած կոռուպցիան բխում է Հայաստանի տնտեսության և տարածքային անվտանգության վրա Ռուստաստանի համախմբված ազդեցությունից:
Դատական արդյունավետություն	42.5	-	-	
Կառավարության ինտեգրվածություն	43.4	37.0	6.4	
Կառավարության մասնակցության չափ				
Հարկային բեռ	83.7	83.8	-0.1	Եկամտահարկի առավելագույն դրույքաչափը կազմում է 26 տոկոս, իսկ շահութահարկի առավելագույն դրույքաչափը՝ 20 տոկոս: Այլ հարկատեսակները ներառում են ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը: Ընդհանուր հարկային բեռը կազմում է ազգային եկամտի 23.5 տոկոսը: Անցած 3 տարիների ընթացքում Կառավարության ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 24.7 տոկոսը, իսկ բյուջեի դեֆիցիտը միջինում կազմել է ՀՆԱ-ի 2.8 տոկոսը: Պետական պարտքը ՀՆԱ-ի 46.6 տոկոսն է:
Պետական ծախսեր	81.7	80.7	1.0	
Ֆիսկալ առողջություն	82.9	-	-	
Կարգավորման արդյունավետություն				
Գործարար ազատություն	78.5	77.5	1.0	Կարգավորիչ շրջանակը հարաբերականորեն արդյունավետ է: Բիզնես ստարտափների նկատմամբ նվազագույն կապիտալի պահանջը վերացել է, սնանկության ընթացակարգերը արդիականացվել են: Աշխատուժի՝ վարձատրության հետ չկապված ծախսը չափավոր է, սակայն ոչ ֆորմալ աշխատուժի շուկան նշանակալի է: 2015թ. հունիսին էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման դեմ զանգվածային հանրային բողոքից հետո ՀՀ կառավարության և ռուս-հայ միլիարդատիրոջ համատեղ ֆինանսավորմամբ ավելի քան մեկ տարվա ընթացքում տրամադրվել են էլեկտրաէներգիայի սուբսիդիաներ:
Աշխատուժի ազատություն	72.4	62.2	10.2	
Մոնետար ազատություն	72.8	72.8	0.0	
Բաց շուկաներ				
Առևտրի ազատություն	80.2	85.6	-5.4	Առևտուրը Հայաստանի տնտեսության կարևոր մաս է կազմում. արտահանման և ներմուծման ընդհանուր ծավալը կազմում է ՀՆԱ-ի 71 տոկոսը: Միջին կիրառվող տարիֆային դրույքը կազմում է 2.4 տոկոս: Բյուրոկրատական խոչընդոտներն արտահայտվում են միջազգային առևտրում, իսկ օտարերկրյա քաղաքացիները չեն կարող ունենալ հողի սեփականություն: Պետությունն այլևս որևէ բանկում մասնաբաժին չունի, սակայն բանկային հատվածը, որը կազմում է ֆինանսական հատվածի համախառն ակտիվների ավելի քան 90 տոկոսը, դեռևս դժվարանում է երկարաժամկետ վարկերի տրամադրման հարցում:
Ներդրումային ազատություն	80.0	80.0	0.0	
Ֆինանսական ազատություն	70.0	70.0	0.0	